1 հուլիսի 2018 թ.

Մամուլի հաղորդագրություն

ԱԴԱՄԻ 2018 Մրցանակի Առաջին ժամկետն ավարտված է

ԱԴԱՄԻՆ տեղեկացնում է, որ հուլիսի 1-ին ավարտվեց ԱԴԱՄԻ 2018 Մրցանակին ներկայացվող Հայտերի առաջին ժամկետը: Դա վերաբերվում էր նյութերին, որոնք հեռարձակվել կամ հրապարակվել էին 2016թ-ի հոկտեմբերի 10-ից 2018թ-ի հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածում:

2018թ-ի հունվարի 1-ից հետո հեռարձակված տեսանյութերի կամ հրապարակված կայք-էջերի համար Մրցույթը շարունակվում է: ԱԴԱՄԻՆ կոչ է անում լրագրողներին, կինեմատոգրաֆիստներին և աուդիովիզուալ ոլորտի արհեստավարժներին նախապատրաստել և ներկայացնել Հայտեր՝ մինչև Մրցույթի հաջորդ ժամկետի ավարտը: ԱԴԱՄԻ 2018 մրցանակի Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը 2018թ-ի հոկտեմբերի 1-ն է:

Մենք անհամբեր սպասում ենք նոր մասնակիցներին: Հավելյալ տեղեկությունների և Հայտ ներկայացնելու վերաբերյալ խորհրդատվություն ստանալու համար այցելեք մեր կայք веб-сайт.

ԱԴԱՄԻ Մրցանակը շնորհվում է միգրացիայի, ինտեգրման և էթնիկ, կրոնական ու մշակութային բազմազանության թեմաներին նվիրված լավագույն հեռուստատեսային ծրագրերին և ֆիլմերին, ինչպես նաև առցանց ծրագրերին: Սա մեդիա ոլորտի արհեստավարժներին տրվող բացառիկ հնարավորություն է՝ իրենց տեսա-լսողական աշխատանքները միջազգային հարթակում ներկայացնելու, ինչպես նաև հեռուստաալիքների հետ կապեր հաստատելու համար: Բոլոր վեց անվանակարգերում հաղթողները պարգևատրվում են դրամական մրցանակներով: Լրացուցիչ, ԱԴԱՄԻ Մեդիա Մրցանակ 2018 մրցույթի յուրաքանչյուր մասնակցի, որ ունի լրագրողական աշխատանքի փորձ և խոսակցական մակարդակում տիրապետում է ռուսերենի, գերմաներենի կամ ֆրանսերենի, տրվում է հնարավորություն Հայտ ներկայացնելու ԱԴԱՄԻ կրթաթոշակի՝ Deutsche Welle (Բեռլին, Գերմանիա), MDR (Լեյպցիգ, Գերմանիա) կամ ARTE (Ստրասբուրգ, Ֆրանսիա) հեռուսատալընկերություններում վերապատրաստում անցնելու համար:

«ԱԴԱՄԻ մեդիա Մրցանակը» շնորհվում է վեց անվանակարգերում.

1. ԱԴԱՄԻ Մեդիա Մրցանակ մշակութա-ժամանցային հեռուստածրագրերի և ֆիմերի համար (խաղարկային)
2. ԱԴԱՄԻ Մեդիա Մրցանակ տեղեկատվական հեռուստածրագրերի և ֆիմերի համար (ոչ խաղարկային)
3. ԱԴԱՄԻ Մեդիա Մրցանակ լրատվական ծրագրերի և կարճամետրաժ ոչ խաղարկային ֆիմերի համար
4. Երիտասարդական ԱԴԱՄԻ
5. ԱԴԱՄԻ Առցանց Մրցանակ վեբկայքերի համար
6. ԱԴԱՄԻ Առցանց Մրցանակ առցանց տեսանյութերի համար:

Լրացուցիչ տեղեկատվության և մրցույթի մասնակցության հայտերի ներկայացման համար այցելեք մեր կայք՝ www.adamimediaprize.eu

Միջազգային ժյուրիի հավաքը հավակնորդներին և հաղթողներին որոշելու համար կկայանա 2018թ-ի հոկտեմբերին, Օդեսայում (Ուկրաինա):

Հաղթողները կհայտարարվեն մրցանակների հանձնման արարողության ընթացքում՝ Քիշինևում (Մոլդովա), 2018թ-ի նոյեմբերին, որը կհեռարձակվի միջազգային հեռուստալիքներով:

ԱԴԱՄԻ Մեդիա Մրցանակը ֆինանսավորվում է Գերմանիայի Դաշնության Արտաքին գործերի նախարարության և ProCredit հոլդինգի (Գերմանիա) կողմից:

Սպասում ենք ձեր հայտերին:

ԱԴԱՄԻ Մեդիա Մրցանակ Մշակութային Բազմազանության համար

Ե. Գաբաշվիլի փողոց, 14, Թբիլիսի 0108, Վրաստան

Հավելյալ տեղեկությունների համար՝ communications@adaamimediaprize.eu

Գրանցում՝ registration@adamimediaprize.eu

Հեռախոս +995 32 298407